«ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

" "NORK" SOCIAL SERVICES TECHNOLOGY
AND AWARENESS CENTER" FUND

« 21 » 06 2018թ.

N_Ե 923-18

**«ՋԻ ԷՄ ՋԵԹ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ Ղ. ԲԱՐԻԿՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Բարիկյան**

«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝«Նորք» կենտրոն) և «Ջի էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ի միջև սույն թվականի մայիսի 21-ին կնքված N «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-18/6/5» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում Ձեր կողմից մատակարարվել է 2 անվանում ապրանք՝ փոշի տոներներ: Պատասխանատու ստորաբաժանման եզրակացության համաձայն մատակարարված ապրանքները չեն ընդունվել տեխնիկական բնութագրերին անհամապատասխանության պատճառով, այն է՝ մատակարարված ապրանքի փաթեթավորման վրա բացակայում է ապրանքի անվանումը, չկա նշում պարունակության նպատակի և կիրառության մասին: Բացակայում են նաև ապրանքի քաշի և արտադրող կազմակերպության մասին նշումները, որոնք առկա են Պայմանագրի հավելված 1-ում: Հունիսի 13-ին «Նորք» կենտրոնը «Ջի էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ-ին ծանուցել է թերությունների մասին, և հունիսի 19-ին ստացել է գրություն՝ ծանուցմամբ ներկայացված անհամապատասխանությունը «Ջի էմ Ջեթ սերվիս» Ընկերության կողմից ոչ հիմնավոր գնահատելու մասին:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի ա) ենթակետը՝ «Նորք» կենտրոնը 2018թ. հունիսի 21-ից միակողմանի լրիվ լուծում է Պայմանագիրը, որի գինը կազմում է 378480 (երեք հարյուր յոթանասունութ հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք նաև, որ «Ջի էմ Ջեթ սերվիս» ՍՊԸ–ից կգանձվի Պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 37 848 (երեսունյոթ հազար ութ հարյուր քառասունութ) ՀՀ դրամի չափով՝ 163518012543 հաշվեհամարին:

**ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝** **Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

RA YEREVAN "NORK" CENTER • ՀՀ ԵՐԵՎԱՆ «ՆՈՐՔ» ԿԵՆՏՐՈՆ • 02602449

Կատ՝ Ֆինանսաբյուջետային բաժին

մենք ստեղծում ենք լուծումներ
we create solutions

norq@norq.am
+374 10 24 75 32
ՀՀ, ք. Երևան 0069, Կ.Ուլնեցու 68
68 K.Ulnetsi str., 0069 Yerevan, RA